



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

267
019

1999





Ա. ԱԶԱՏԱԽՈՀԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

ԹՈՒՆԻ

Ա.Ռ.

ՊԱՏՐԻԱՐԿՆ ՀԱՅՈՑ

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺՍՊԵՏԱՆ



Ի ՆՊԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՂՈՑ



Ի. ՊՕԼԻՍ

ԻԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1880

977
8100

ԼՍՈ
2019

Առջին Մյունխենի Հայրենի
Ընտրության Կոմիտեի. 1882 Յուլի 27

Ա. Ա. ԶԱՏԱԽՈՂԵԱՆ *Ե. Մարտի*
Ա. Ա. Զատախան

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

ԹՈՒՂԹ

Ա.Ռ.

ՊԱՏՐԻԱՐԻՔՆ ՀԱՅՈՑ

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ



Ի ՆՊԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏՈՑ

304.

Արթուր Զատախան



42019-60

Հ. Զոհ

Ա Ռ

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ն Ն Ա Յ Ո Ց

Տ Է Ր Ն Ե Ր Ս Է Ս Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ե Ա Ն



Այն մեր Հասգիւղին Սուրբ Ներսիսեան եւ յետոյ Նուար-Շահնազարեան վարժարանին մէջ, կը յիշէք, ինձ դասեր տուած էք, յորոց օգտած եմ ես մեծապէս: Մանաւանդ օգտած եմ Ձեր քարոզներէն Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյն մէջ, որ Նօղո-Տամ-տը-Բառիի բաղդատուեցաւ Ձեր օրին, որ բաղդատուեցաք բոցալեզու Լազօտէսին:

Ես ոչ քարոզ տալ կու գամ այսօր Ձեզ, եւ ոչ դաս. այլ քանի մը խօսք ունիմ միայն: Եթէ մտիկ չ'ընէք ինձ, վսյ Ձեզ:

Իմացոյ որ սուրբ ցասմամբ էք համակուած կարգալով հրատարակութիւններս, եւ դուցէ չը կարգալով իսկ — այնքան երկիւզած էք Դուք, դիտեմ: Իմացէք այժմ, եթէ չ'իմացաք արդէն, որ ես ալ կը զգամ ցասումն, երկար ժամանակէ ի վեր, ականատես որ եմ ամեն օր ազգային դատարակու-

թեան նկատմամբ, աւանդ, ընդհանուր անտարբե-
րութեան: Եւ իմցաւ, եւ իմ ցասունս այն աստիճա-
նին կուգայ հասնի, որ այսպէս եթէ շարունակուելի,
մտա օրերս պիտի գուժեն, Սրբազան Հայր, թէ
յիմարանոց է տարուած Ձեր նախկին սան, Ձեր
որդին... անարժան: Պիտի հրճուի՞ք յայնժամ:
Ո՛չ, — ԸղՁեղ կը ճանչնամ — դառնապէս պիտի
լաք: Այդ արտասուքն, եւ դառնագոյն եւս ար-
տասուքներ Ձեր սրտին եւ ապագայ սերունդին
խնայելու մտօք է որ պարտ համարեցի Ձեզ այսօր
խօսիլ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՆ:

Արդ, ճշմարտութիւնն այն է թէ, ծանր պատաս-
խանատուութեան ներքեւ է Հայ ազգին վարչու-
թիւնն որ Հայ մանկաւոյն դաստիարակութեան
նկատմամբ կայ մնայ անհոգ անտարբեր. որ ի բաց
կը մերժէ կրթական պաշտօններէ լրջամիտ անձեր:
Եւ այսպէս կը քաջալերէ թաղերն որ եւ նոքա ար-
համարհօղ հանդիսանան եւ հպարտօղ իսկ ողջա-
մտութեան եւ ճշմարիտ լուսաւորութեան:

Շատ անգամներ գրեցի, շատ անգամներ ես վար-
չութեան եւ ժողովրդեան ունն եւ ուրունն հրա-
ւիրեցի կրթական խնդրոյն վրայ, ինքրոց ինքեքն
ըստ Եւրոպական եւ Ամերիկեան ազգաց, 'գորս ան-
յազարար կ'ընդօրինակենք իբրու կապիկ արտաքին
եւ մարմնական մեր շարժումներուն մէջ: Շատ ան-
գամներ ես ձայն բարձրացուցի. եւ տեսայ որ
Աստուածաշունչի կուոց նման ականջ ունիք եւ ոչ
լսէք: Տեսայ որ սիրտ ունիք եւ անզգայ էք...:

Յայնժամ յուսահատեցայ. յայնժամ զարմացայ,

յայնժամ դայրացայ: Եւ երկու ձեռքերս եւ երկու
ոտքերս գետին զարկի օր մը հազար անգամ: Եւ
վերջապէս ինձ մտածում մ'եկաւ, չը գիտեմ վերջն
թէ վարէն...:

Ի՞նչ էր այդ մտածումն:

Ամեն մարդ գիտէ. — Մանակեւ կրօնն, այո՛...:

Եւ վութացի ձեռն ի գործ արկի. եւ քսակա
վրայ չափելով գրեցի Փիլիսոփայական Բարարանն
Խափոջն, ոյր վրայ խօսեցաւ ամեն մարդ, եւ կրթի
նեցաւ ո՛րք ընթերցաւ 'զայն եւ խօսեցաւ իր վրոնն.
Եւ այդ էր իմալ նախտակս. Յնցել եւ շարժել Հայ
ժողովուրդն: Անվրէպ էր դարմանս. եւ իմ նախ-
տակիս լիովին պիտի հասնէի, շարունակ պիտի
որ գործածէի, անոր քանակն աւելցնելով օր քա-
'գօր.....



Ա՛հ, կը հաւատամք արդեօք, արիւն կերթայ
սրտէս, երբ գրիչս կը խնդայ գիւսահարի պէս...:
— Մանուկ էի, 'զիս երբոր ճանչցաք Հասգիւղի
մէջ. այն Հասգիւղին, ուր ծնաք եւ փայլեցաք,
'գոր գլխովին վերածնաք եւ փայլեցուցիք այն-
քան: Գուցէ տեսած էք իմ լացս. այլ կը յիշէք օր
մը տեսած ըլլալ ծիծաղս: — Երկու տարի առաջ,
Եհնի գիւղ ինձ չափ արտմեցաք, Գուք արդէն
տխուր, երբ տեսաք 'զիս ամենատխուր: Այդ
տխրութիւնն իմ սրտիս մէջ բոյն շինեց, Հայր,
այդ տրտմութիւնն իմ սրտիս մէջ թոյն շինեց: Եւ
ահա այդ թոյնն է որ կը թափեմ գրուածներուս
մէջ: Եւ այդ թունով պիտի թունաւորուիմ եւ
թունաւորեմ, սպաննուիմ եւ սպանանեմ... ազգս,

եթէ չը փութաք ազատել զիս , եւ ազատել ազգն իմ եւ Ձեր ազգն :

Եւ ինչո՞ւ յուսահատէի ես , եւ ինչո՞ւ արամութիւն զգենուիք Դուք . Հոգւոյն սրբոյ դէմ ինչո՞ւ հայհոյէի ես , եւ սուրբ ցամամբ էր հոգին Ձեր բորբոքէր , եթէ այն երանաւէտ օրն իսկ ուր բարձրացաք ի վերայ դահուն պատրիարքական , երդնուիք կրթական նորոգման նկատմամբ ցոյց տալ այն գերմարդկային արութիւնն 'զոր յայտնեցիք , երբ ծնաւ կամ ծնաք Դուք ինդիրն Հայկական . եթէ կ'ըսեմ , դումարելով Ձեր շուրջ ազգին հազուագիւտ ողջամիտ անձերն եւ բոլոր դաստիարակներն , ընդ նոսա խորհուրդ խորհէիք թէ որպէս հնար է պատրաստել արժանազոյն ուսուցիչներ եւ հիմնել լաւագոյն — խոնարհագոյն ⁽¹⁾ եւ բարձրա-

(1) Դեռ չունինք ոչ կանոնաւոր ընտելարան մը , ոչ կեդրոնական վարժարան մը — Միմաս Ձերազ կրցաւ բռն անուանեմք Զուգններն , եւ Իփէկձեան հռչակել թէ ախոռ են Հայոց պարոններն : Չունինք դեռ Պօլսեցի Հայ մանկավարժ մը : Ասիական ընկերութեան մէջ Բաղդիսցի մը կը խօսի Հայոց պատմութեան վրայ . . . եւ Արեւելագիտաց վեհաժողովներուն մէջ ներկայացուցիչ մը չ'ունի Հայոց ազգն : Դեռ չ'ունինք . . . քերականութիւն մը այն լեզուին 'գոր կը խօսինք :

Ուրեմն ի՞նչ ունինք :

Ոչինչ :

Եւ կ'ուզենք այդ ամենամեծ սփիւնէն նորաստեղծել Հայասանն : Միտեման կ'աշխատինք . Այլ սուր ամենէն աւելի հարկ է միտեմուն , անսի բացակայ է միտեմունն . — ազգային դաստիարակութեան մէջ , այո՛ , չը կայ Մեծիթիւն : Ի՞նչ կը կոչուին այն մարդիկ որք կը թափեն ամեն զիգ՝ ոտքի հանելու հիւանդ մը , եւ կը մոռնան միայն բերել բժիշկ մը . . . :

Թողունք դրական իմաստասիրութիւնն , որ բացարձակապէս

գոյն — դարոցներ , նաեւ արուեստանոցներ , հայրենեաց լուսաւորութեան հնոցներ :

Դեռ ժամանակ է սակայն : Վաղ առաւօտ իսկ , եթէ կամենաք , կրնաք ձեռնարկել կատարման այն առաջարկութեան 'զոր կը ներկայացնեմ այսօր Ձեզ յանուն անցեալ եւ ապագայ սերնդոց , յանուն Հայութեան եւ մարդկութեան , աղերսելով , սպառնալով , արիւն արտաւեր թափելով եւ դաշոյն ցուցնելով . . . :

Կը դասադարձեմ մեր ազգային վարչութեան ընթացն : Ամենապարզ խելով իսկ մարդ որոշել կարող է թէ , մեր վարչութեան — որպէս , աւա՛ղ , բազում վարչութեանց — Ի՞նչն ուրիշ բան չ'է բայց եթէ Ի՞նչն , եւ իմաստութեան գերադրականն :

Մեծասուննե՛ր , մեծասուննե՛ր , ա՛խ . կործանելու տուներ , աղբաս աշխատաւորք իրենց ցաս դանկան օրականին ցաս փարան յօժարակամ կու ցան ազգին , եւ դուք կը զլանա՛ր ձեր ցաս հազար ֆունգ ամսական եկամուտին հարիւր ֆունգն ինքնակամ նուիրել խաւարեայ , կեղեքեայ , սովեայ , քառապեայ Բէր — ա՛լ չ'եմ ըսեր Գէր — Հայասանին . . . :

Ես կը հարուածեմ . . . Հայոց Պատրիարքն , 'գոր բոլոր սրտով կը սիրեմ , որ , քաջ գիտեմ , ժողովրդեան փրկութեան համար պիտի քար իր կեանքն «եւ հազար կեանք , թէ ունենար» : Ի՞նչ պէ՛տք է որ ընեմ ձեզ . . . :

Ձեր խիղճն արձնեցնելու համար . . . մերքնայ մը պիտի հրնարեմ , ո՛ր մարդամերկաններ . . . մարդու կեղծուպասիր պատկերներ . . . մարդկութեան անարգանքներ . . .

Մեծասուննե՛ր , մեծասուննե՛ր , դուք որ ամեն եղանակի , դուք որ ամեն նորածելի նոր հազուս կը հագնիք , կը հանդուրժէ՛ք սակայն դուք՝ որ քարին քանակութեամբ իմ Հայասանս մօրէմերկ կենայ չորս հոյեմուն դէմ , եւ մինչեւ այն լուսած այլ չը տեսնուած ցրտասառոյց մեծունեմուն խորն . . . :

Մեծասուննե՛ր , մեծասուննե՛ր , կ'երդնում ահա , ձեր զլլուսն քաներ պիտի բերեմ ես , քաներ . . . :

Այլ եթէ խօսքս արհամարհէք, եթէ շարունակէ վարչութիւնն ազգային կրթութեան նկատմամբ իր մեղասպարտ անհոգութիւնն. եթէ, որպէս այլուր խօսեցայ, Պատրիարքդ Հայոց ո՛վ վարժապետեան, ըզ ֆեզ չը նկատես մանաւանդ Հայոց կրթութեան պաշտօնեան, ամեն ասեմ. . . ըզ ֆեզ ալ պիտի ծաղրեմ, ազգն ալ պիտի ծաղրեմ, Աստուած ալ պիտի ծաղրեմ: Պիտի ծաղրեմ արարիչ եւ արարչութիւն, ի մի բան. . . :

Պիտի գայ օր մը, ուր անկարօզ ըլլամ գուցէ տպագրել. . . յայնժամ պիտի սկսիմ ճառել. թաղէ թաղ, հրապարակէ հրապարակ, քաղաքէ քաղաք եւ աշխարհէ աշխարհ պիտի շրջիմ, թռչիմ, ծանակելով, դատելով ու դորդելով երկիր եւ երկին: Կուրծքի հիւանդութիւնս, որուն հազիւ այսօր կը ջնջուին հետքերն վերջին, պիտի նորոգի, եւ պիտի մեռնիմ. . . : Ինչ փոյթ, իմ այս երկու անիծած աչքերովս՝ ամեն օր, ամեն ժամ շօշափելով ազգիս մեռելութիւնն, ամեն օր, ես ամեն ժամ կը մեռնիմ այժմ: Չ'է՞ մի լաւ որ անդամ մը մեռնիմ, եւ ազատիմ այս անլուր տանջանքէն, այս հուր ու սուր տառապանքէն, այս սգատխուր կեանքէն. . . :

Եւ արդ խօսեցայ, Հայր Սրբազան: Դարձեալ այնպէս ըրէք, որպէս կամիք: Սա միայն դիտցէք թէ որոշած եմ փրկել կամ ջնջել Հայ ազգն:

ԿԵԱՆՔ ԿԱՄ ՄԱՀ. այս է բուն իմ անունս:

Ա. ԱԶԱՏԱԽՈՇԵԱՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ Ա. ԱԶԱՏԱԽՈՇԵԱՆԻ



Գին արժ. դ՞ն.

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ (Նախախորժ) 5

ՆՈՅՆ (Փորժ) ՆԱԹԱԲԱՆ. Մասն Ա..... 5

ԿՐԹԱԿԱՆ ԽԵՂՐՈՑԵՆ ՎՐԱՅ ԹՈՒՂԹ ԱՌՏ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԹԱՊԵՏԵԱՆ 1



Պ Ի Տ Ի Հ Ր Ա Ց Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ն



Ա. ԱԶԱՏԱԽՈՇԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ (Փորժ) Հաստ Ա.

ԴԱՒԱՆԱՆՔ. — ՄՈՂՍԷՍ ԵՒ ՅԻՍՈՒՍ



Մ. Ի. Մ Ա Ղ

ԴԻՔ ԵՒ ԴԻԻՑԱԶՈՒՆՔ



* * *

ԽՐԱԽՈՑՈՒ ԵՒ ԼՈՑՈ

Հին քարտ

1032

ՀՀ Ազգային գրադարան



NL0342948

